ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

վճարովի ծառայությունների մատուցման

ք.Հրազդան «15» 11 2019թ.

<<ԳավառիԲԿ>>ՓԲԸ (այսոտետ՝Պատվիրատու),իդեմս տնօրեն՝Ա. Կարապետյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հրազդանի մարզային արյան բանկ» ՊՓԲԸ (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն՝ Թ. Սեյրանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

1.1. Պատվիրատուն << առողջապահության նախարարի 2012թ. հունվարի 24-ի N 02-Ն հրամանով հաստատված պահանջագրի ներկայացման դիմաց փոխհատուցման սկզբունքով՝ սույն պայմանագրի 4-րդ կետում նշված գների համաձայն ստանում է

ա) արյան բաղադրամասեր (դրանց համապատասխան քանակի առկայության դեպքում)

բ) ծառայությունները

2.Պայմանագրի գործողության ժամկետը

2.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև <<01 >> հունվարի 2020թ. ներառյալ:

3.Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

3.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ծանոթանալու (ստուգելու) ԿԱՏԱՐՈՂ-ի կողմից համատեղելի արյան բաղադրամասերի ընտրության համապատասխանությունը սույն պայմանագրի 4.1 կետում նշված մեթոդին:

3.2 Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Անհրաժեշտ արյան բաղադրամասերի համար ԿԱՏԱՐՈՂ-ին ներկայացնել անթերի լրացրած, բժշկի կողմից ստորագրված և բուժհաստատության տնօրենի կողմից կնիքված արյան բաղադրամասերի պահանջագիր:

3.2.2 Առանց ուշացումների Կատարողին վճարել սույն պայմանագրի 4-րդ կետում նշված կարգով:

3.3 Կատարողը պարտավոր է՝

3.3.1 Ծառայությունները մատուցել սույն պայմանագրի պայմաններին համապատասխան:

3.3.2 Պատվիրատուի պահանջարկի հիման վրա հնարավորինս սեղմ ժամկետում ապահովել պատշաճ որակի արյան բաղադրամասերով, վերջինների առկայության դեպքում:

3.3.3.Պատվիրատուի պահանջի դեպքում շուրջօրյա կատարել էրիթրոցիտային զանգվածի լվացում և համատեղելի արյան բաղադրամասի ընտրություն:

3.3.4. Յուրաքանչյուր մեկ միավոր Արյան բաղադրամասի համար ՊԱՏՎԻՐԱՏՈՒ-ին հատկացնել մեկ հատ ներարկման համակարգ:

3.3.5. Պահանջի դեպքում համատեղելի արյան բաղադրամասերի ընտրության համար պացիենտից փորձանմուշ վերցնելու համար Պատվիրատուին անհատույց հատկացնել վակուում փորձանոթներ, ասեղներ ու բռնիչներ:

3.4 Կատարողը իրավունք ունի՝

Scanned by CamScanner

.1 Անկախ հիվանդության ելքից, չներարկված արյան բաղադրամասերը հետ չվերցնել և չփոխանակել:

4.Վճարման չափը և կարգը

4.1 Արյան բաղադրամասերը գնելուց վճարումը կատարվում է կողմերի պայմանավորվածությամբ՝ կանխիկ (պացիենտի մերձավորները) կամ փոխանցումով՝ (Պատվիրատուն) համաձայն ստորև նշված աղյուսակում ներկայացված գների՝ հաշիվ – ապրանքագրի ներկայացման պահից ոչ ուշ, քան 10 /տասը/ օրվա ընթացքում:

	Արյան բաղադրամասերի և ծառայությունների անվանումը	գինը (դրամ)
1	Էրիթրոցիտների զանգված (250 - 320 գ.)	16.000
2	Թարմ սառեցրած պլազմա (200 - 270 գ.)	15.000
3	Մեկ անգամ լվացած էրիթրոցիտների զանգված	18.000
4	Կրկնակի լվացած էրիթրոցիտների զանգված	19.000
5	Եռակի լվացած էրիթրոցիտների զանգված	20.000
6	Համատեղելի մեկ արյան բաղադրամասի ընտրություն Կումբսի անուղղակի ռեակցիայով	4.000
7	Հակառեզուս հակամարմինների հայտնաբերում Կումբսի անուղղակի ռեակցիայով	3.000
8	Հակառեզուս հակամարմինների տիտրի որոշում Կումբսի անուղղակի ռեակցիայով	5.000

4.2 Կատարողն իրավունք ունի սույն պայմանագրի 4.1 կետում նշված ծառայությունների արժեքները միակողմանիորեն փոփոխել՝ այդ մասին առնվազն 10/տասը/ աշխատանքային օր առաջ գրավոր ծանուցելով Պատվիրատուին:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցություն (Ֆորս Մաժոր)

5.1 Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից սույն պայմանագիրը կնքելուց հետո ի հայտ եկած, անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել (երկրաշարժ, ջրհեղեղ, հրդեհ, պատերազմ և այլն) և որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կողմերը սույն պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում պատասխանատվություն են կրում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Լրացուցիչ պայմաններ

Scanned by CamScanner

Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 բնակից, կողմերից յուրաքանչյուրին տրվում է մեկական օրինակ:

7.2 Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված կողմերի կողմից:

7.3 Պայմանագրի գործողության ընթացքում ծագող վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Անհամաձայնության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.4 Սույն պայմանագրի գործողությունը կարող է դադարել՝

1. կողմերի փոխադարձ համաձայնությամբ
2. կողմերից մեկի նախաձեռնությամբ՝ այդ մասին մեկ ամիս առաջ գրավոր ձևով տեղեկացնելով մյուս կողմին:

8. Կողմերի իրավաբանական հասցեները

Կատարող՝	Պատվիրատու՝
«Հրազդանի մարզային արյան բանկ » ՊՓԲԸ Հասցե՝ ք. Հրազդան, Ղուկասյան 40, «Հայէկոնոմ բանկ» ԲԲԸ Հրազդանի մասնաճյուղ ՀՎ 16315801094 ՀԿՀՀ 0308953	<<Գավառի ԲԿ>> ՓԲԸ ք. Գավառ Ազատության - 21 <<Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ >> Գեղարքունիք / մասնաճյուղ ՀՎ 220085140329000 ՀԿՀՀ 08417304
Տնօրեն _____ Թ. Մեյրանյան	Տնօրեն _____ Ա.Կարապետյան
Կ.Տ	Կ.Տ

Scanned by CamScanner